

**2018/2019 ուս. տարի  
առկա համակարգում սովորող  
ուսանողների կողմից դասախոսների գնահատման  
հաշվետվություն**

2018/2019 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում «Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ բարձրագույն կրթության ապահովման նպատակով ուսանողների կողմից դասախոսների գնահատման» կարգի համաձայն առկա համակարգում սովորող ուսանողների շրջանում անցկացվեց դասախոսների գնահատում:

Որակի ապահովման վարչության անցկացված վերլուծությունը ցույց տվեց, որ 2018/2019 ուս.տարվա դասախոսների միջին գնահատականը 1-ին կիսամյակում կազմել է 3,5:

Այս հարցումների ընթացքում ուսանողների կողմից բարձր է գնահատվել հարցաշարի վեցերորդ հարցը, այն է՝ դասերի ընթացքում քնարկումների և բանավեճերի կազմակերպումը՝ 3.6: Որպես կանոն ուսանողները բավականին բարձր են գնահատել դասախոսների կողմից իրենց ձեռք բերած գիտելիքների գնահատումը: Այն կազմում է ընդհանուր սանդղակի ամենաբարձր միավորներից մեկը՝ 3,5, բարձր են գնահատել նաև դասախոսների կողմից ուսանողների ձեռք բերված կարողությունների ու հմտությունների գնահատումը՝ 3,5: Ամենացածր միավորով գնահատել են «Ուսանողներին ներգրավում է գնահատման գործընթացին»՝ 3,2 «Մատուցվող նյութը ներառում է գիտության վերջին ձեռքբերումները»՝ 3,2, ինչպես նաև «Դասընթացի սկզբում ներկայացնում է դասավանդած առարկայի վերջնարդյունքները»՝ 3.2: Դա հաստատվում է նաև ուսանողների հետ զրույցների ընթացքում:

Վերլուծության արդյունքները կարող են հիմք ծառայել պրոֆեսորադասախոսական անձնակազմի կոմպետենցիաների զարգացման, բուհի կարիքների վերհանման և համապատասխան ծրագրերի մշակման համար:

Կից ներկայացվում է 2018-2019 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասախոսների գնահատման ամփոփ ցուցանիշները:

## Համալսարանի դասախոսների գնահատման ամփոփ ցուցանիշները

1. Դասընթացի սկզբում ուսանողին տրվում է առարկայի ուսումնամեթոդական փաթեթը՝	3.3
2. Դասընթացի սկզբում ներկայացնում է դասավանդած առարկայի վերջնարդյունքները՝	3.2
3. Բացատրում է՝ ինչպես տեսական գիտելիքը կիրառել մասնագիտական ոլորտում՝	3.2
4. Մատուցվող նյութը ներառում է գիտության վերջին ձեռքբերումները՝	3.2
5. Դասավանդման մեթոդները նպաստում են ուսանողների միջև համագործակցության զարգացմանը (զույգերով և խմբային աշխատանք)	3.3
6. Կազմակերպում է քննարկում կամ բանավեճ դասերի ընթացքում՝	3.6
7. Ուսանողին մղում է ինքնուրույն, հետազոտական, վերլուծական աշխատանքի՝	3.3
8. Ուսանողին ծանոթացնում է առարկան յուրացնելու մեթոդներին՝	3.4
9. Անհատական աշխատանք է տանում նյութը դժվար յուրացնող ուսանողների հետ՝	3.3
10. Գնահատում է ուսանողին անկողմնակալ, նախապես ներկայացված չափանիշներով՝	3.5
11. Գնահատում է ուսանողի ձեռք բերված գիտելիքները՝	3.5
12. Գնահատում է ուսանողի ձեռք բերված կարողությունները ու հմտությունները՝	3.5
13. Դասախոսի գնահատման մեխանիզմները նպաստում են ուսանողի առաջադիմության բարձրացմանը՝	3.4
14. Ուսանողներին ներգրավում է գնահատման գործընթացին՝	3.2

**Համալսարանի դասախոսների գնահատման ամփոփ ցուցանիշները ըստ առանձին  
ամբիոնների**

N	Մանկ. և հոգեբ. ամբիոն (մանկավ.)	Իրավա- գիտության և հասարակագ. առարկաների ամբիոն	Տնտեսա- գիտության և կառ. ամբիոն	Մաթ., ինֆորմ. և հաշ. տեխ. ամբիոն	Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն	Ռումանա- Գերմ. և ռուս բան. ամբիոն
1.	3.3	3.4	3	3	3	3.3
2.	3.7	3.2	3	3.68	2.67	2.6
3.	3.6	3.1	3.5	3	3.5	3.5
4.	3.1	3.6	2.6	2.1	3.5	3.3
5.	3.3	3.3	3.7	3.1	3.1	3.6
6.	3.1	3.4	3.2	2.4		3.3
7.	3.13	3.5	3.8			3.3
8.	3.36	3.4	2.7			3.4
9.	3.5	3	3			
10.	3.3	3.4	3			
11.	2.8	3.7	3			
12.	3.6	3.1	3			
13.	2.79		3.5			
14.	3.2					

